

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/7**

**26 հուլիսի 2016թ.**

Քննարկվեց Ա/Ձ ժաննա Պետրոսյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 09.06.2016թ. թիվ 322561/05 որոշման դեմ:

#### **Ա/Ձ ժաննա Պետրոսյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ ժաննա Պետրոսյանը հայտնում է, որ զբաղվում է մանրածախ առևտրով և հանդիսանում է շրջանառության հարկ վճարող: 2015թ. մարտ ամսից ներկայացրել է դիմում՝ գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ:

2015թ. համար պետք է ներկայացնել եկամտային հարկի տարեկան պարզեցված հաշվարկ, սակայն չի ներկայացրել, որի համար ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 20.000 դրամի չափով:

Ա/Ձ ժաննա Պետրոսյանը հայտնում է նաև, որ այն ժամանակ, երբ պետք է ներկայացնել վերոգրյալ հաշվարկը եղել է հղի և ներկայումս էլ շատ ծանր է տանում այդ պրոցեսը:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ ժաննա Պետրոսյանը խնդրում է տույժ չկիրառել, իսկ անհնարինության դեպքում՝ նվազեցնել տույժի չափը:

#### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 999 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 09.06.2016թ. թիվ 999 արձանագրությունը պարզել է, որ Ա/Ձ ժաննա Պետրոսյանը «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ. տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 09.06.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 322561/05 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով Ա/Ձ ժաննա Պետրոսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Հարկ է նշել, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկ վճարող ֆիզիկական անձինք պարտավոր են հարկային տարվա համար մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը ներառյալ

բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել տարեկան եկամուտների մասին հաշվարկ, իսկ ամբողջ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ավելացված արժեքի հարկ վճարող չհամարված հարկ վճարողները՝ տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկ (այսուհետ նաև՝ տարեկան եկամուտների մասին հաշվարկ):

Տվյալ դեպքում Ա/Ձ ժաննա Պետրոսյանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ. տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկը: Այսինքն՝ Ա/Ձ ժաննա Պետրոսյանի կողմից թույլ է տրվել գանգանք, որի համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Ինչ վերաբերվում է Ա/Ձ ժաննա Պետրոսյանի միջնորդությանը՝ գանգատում բերված հիմքերով վարչական պատասխանատվության չենթարկելու վերաբերյալ, ապա հարկ է նշել, որ թե մինչև Որոշման ընդունելն իրականացված վարչական վարույթի և թե սույն գործի շրջանակներում գանգատում բերված փաստարկները հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 09.06.2016թ. թիվ 322561/05 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ